



Հասցե ՀՀ, Լոռու մարզ, ք Ստեփանավան, Երիտասարդական 47
հեռ (+374) 93315108
Էլ. փոստ info_stepanavan@aarhus.am, manya_lore@yahoo.com

N002-21

11 դեկտեմբեր 2014թ.

ՀՀ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի
անտառտնտեսության տնօրեն Ա. Միկոյանին
Ստեփանավանի Օրհուս կենտրոնի
համակարգող Մ. Մելիքջանյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Միկոյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից
վավերացված Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, խնդրում եմ Ձեզ, Ստեփանավանի Օրհուս
կենտրոնին՝ հանրության պահանջով, տրամադրել տեղեկատվություն հետևյալի
մասին.

1. Խնդրում ենք բացատրել, թե՞ ինչ նպատակով են հատվում եղևիններ
Պուշկինո համայնքին հարող անտառային տարածքներում:

2. Ի՞նչ միջոցառումներ են կատարվում Ամանորի համար եղևինների հատումը
կանխելու համար:

3. Որքա՞ն ապօրինի ծառատումներ են գրանցվել բնապահպանական
պետական տեսչության կողմից 2014թ. Ընթացքում:

«Տեղեկատվության մատչելիության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ
հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել
ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք
պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր
տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության
մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Ստեփանավանի շահագրգիռ հասարակության անունից և խնդրանքով,
Հարգանքներով՝

Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող

Մանյա Մելիքջանյան